	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	IN 54-01		
	Շահերի բախման սահմանափակման հրահանգ	Ամսաթիվ՝ 26.12.2016թ.	Խմբագրություն 2	6/1

Առարկան

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Շահերի բախման սահմանափակման հրահանգով» (այսուհետ՝ Հրահանգ) սահմանվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) իրականացվող գործարքների, այդ թվում նաև Ֆինանսական շուկաներում իրականացվող գործարքների, արդյունքում հնարավոր շահերի բախման դեպքերը, վերջիններիս բացառմանն ուղղված միջոցառումները հաճախորդների շահերի պաշտպանության, աշխատակիցների նկատմամբ կիրառվող պահանջների սահմանման գործընթացը և շահերի բախման հնարավոր դեպքերի բացահայտման դեպքում աշխատակիցների կողմից ձեռնարկվող գործողությունները:

Կիրառման ոլորտը

Հրահանգը կիրառվում է Բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից:

Առնչվող փաստաթղթեր


«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք
 «Արժեթղթերի մասին» ՀՀ օրենք
 «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4
 «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բանկի ղեկավար, փոխկապակցված և բանկի հետ կապված անձ հանդիսանալու չափորոշիչների վերաբերյալ մեթոդական ուղեցույց
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար աշխատակիցներին տույժի ենթարկելու մասին հրահանգ /IN 62-05/
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաճախորդների, հաշիվների բացման և վարման մեթոդական ուղեցույց /MD 72-01/
 ՀՀ ԿԲ Խորհրդի որոշումներ
 Բանկի Խորհրդի որոշումներ
 Բանկի Վարչության որոշումներ
 Բանկի Գործադիր տնօրենի հրամաններ

Սահմանումներ

Բանկի հետ կապված անձ/անձինք՝ համաձայն Բանկի «Բանկի ղեկավար, փոխկապակցված և բանկի հետ կապված անձ հանդիսանալու չափորոշիչների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի:

1. ՆՊԱՏԱԿԸ

- 1.1. Բանկի Հաճախորդների շահերի գերակայության ապահովումը Բանկի, Բանկի աշխատակիցների, ինչպես նաև վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված այլ անձանց անձնական շահերի նկատմամբ;
- 1.2. Հաճախորդների, Բանկի, Բանկի աշխատակիցների, ինչպես նաև վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված այլ անձանց միջև շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը;
- 1.3. Բանկի և/կամ Բանկի աշխատակիցների իրենց շահերից դրդված գործողությունների կամ անգործության կանխարգելումը, որոնք առաջացնում են վնասներ կամ այլ ոչ բարենպաստ հետևանքներ Հաճախորդի համար;

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	IN 54-01		
	Շահերի բախման սահմանափակման հրահանգ	<i>Ամսաթիվ՝ 26.12.2016թ.</i>	<i>Խմբագրություն 2</i>	<i>6/2</i>

1.4. Բանկի կողմից իր հաճախորդների, գործընկերների հետ ազնիվ և անկողմնակալ գործելու, ապահովումը:

2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

2.1. Հաճախորդին պատկանող միջոցներով Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող գործարքներ՝ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ խախտելով Հաճախորդի ներդրումային նպատակները;

2.2. Գործարքների իրականացում՝ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները և Հաճախորդի կողմից Բանկին ներկայացված պատվերում նշված էական պայմանները;

2.3. Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց կողմից գնված ֆինանսական գործիքների շուկայականից ավելի բարձր գնով վաճառք՝ Հաճախորդին;

2.4. Հաճախորդին պատկանող ֆինանսական գործիքների շուկայականից ավելի ցածր գնով վաճառք՝ Բանկին, Բանկի աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված անձանց;

2.5. Հաճախորդի վրա ճնշման գործադրում կամ այնպիսի խորհրդատվության մատուցում, որի արդյունքում կնքված գործարքները համապատասխանում են Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց շահերին;

2.6. Մեծ ծավալներով կամ Հաճախորդի շահերին չհամապատասխանող գործարքների կնքում, որը նպատակ է հետապնդում ավելի մեծ ծավալներով միջնորդավճարներ և այլ վճարներ գանձել Հաճախորդից;

2.7. Հաճախորդի միջոցների օգտագործում Բանկի սեփական առևտրային ռազմավարությունն իրականացնելու նպատակով;

2.8. Հաճախորդի հաշիվներից ներդրումներ իրականացնելու համար հաշվառվող միջոցների տեղափոխությունների (փոխանցումների) կանխամտածված չիրականացում՝ Բանկի սեփական առևտրային գործառնությունների իրականացման նպատակով;


2.9. Հաճախորդից ստացված, էական նշանակություն ունեցող և/կամ ֆինանսական շուկայում գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող, ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված անձանց;

2.10. Բանկին ծառայություններ մատուցող կազմակերպության իրական շահառուն հանդես է գալիս որպես Բանկի աշխատակից:

2.11. Նշված հնարավոր շահերի բախումների ցանկը սպառիչ և ամբողջական չէ: Բանկի գործունեությունը կարող է ուղեկցվել շահերի բախումների նաև այլ դեպքերով:

3. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՅԱՈՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Բանկը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Հաճախորդների պատվերները կատարելիս՝ Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Վերոնշյալ շահերի

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	IN 54-01		
	Շահերի բախման սահմանափակման հրահանգ	Ամսաթիվ՝ 26.12.2016թ.	Խմբագրություն 2	6/3


պաշտպանման նպատակով Բանկի համապատասխան իրավասություններ ունեցող աշխատակիցները պարտավոր են՝

- 3.1.1. Պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները;
- 3.1.2. Վեր դասել Բանկի և Բանկի հաճախորդների շահերը սեփականից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի և/կամ Բանկի շահերի վրա;
- 3.1.3. Ապահովել Բանկի հաճախորդների և ներդրողների (հաճախորդների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների) շահերի պաշտպանությունը;
- 3.1.4. Իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Բանկը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ;
- 3.1.5. Չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց վերջնական նպատակն է Բանկի կողմից տվյալ Հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումը;
- 3.1.6. Հաճախորդի շահերը համարել գերակա Բանկի շահերի նկատմամբ՝ հաճախորդի պատվերի համաձայն գործարքներ կնքելիս և շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ;
- 3.1.7. Հաճախորդների պատվերների համաձայն իրականացվող գործարքներն իրականացնել մասնագիտական բարձր մակարդակով և հնարավոր լավագույն պայմաններով;
- 3.1.8. Գործարքներ կնքել բացառապես Հաճախորդների հետ կնքված պայմանագրով և այդ ծառայությունների մատուցումը կանոնակարգող կանոններով սահմանված կարգով;
- 3.1.9. գանձել միջնորդավճարներ համաձայն Բանկի գործող սակագների:

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

4.1 Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների միջև հնարավոր շահերի բախման բացառման նպատակով Բանկում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

- 4.1.1. Մեկ հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորությունները չպետք է հակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին;
- 4.1.2. Բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը չպետք է հակասեն Բանկի հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին;
- 4.1.3. Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված կարգով, ընդ որում.
 - 4.1.3.1. Բանկն իրավասու է չկատարել հաճախորդի գործարքը (վերջինիս հնարավորինս շուտ տեղեկացնելու պայմանով), եթե գործարքի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին;
 - 4.1.3.2. Բանկի և նրա հետ կապված անձի միջև գործարքների կնքումը իրականացվում է՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի:
 - 4.1.4. Բանկի համապատասխան աշխատակիցներին արգելվում է կատարել Բանկի սեփական գործարքները, նույն էական պայմաններով ներկայացված Բանկի

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ		IN 54-01	
	Շահերի բախման սահմանափակման հրահանգ		Ամսաթիվ՝ 26.12.2016թ.	Խմբագրություն 2

աշխատակիցների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց կամ հաճախորդի պատվերը մեկ այլ հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործարքի կատարումը բխում է հաճախորդի շահերից և այն չի խոչնդոտում վերջինիս պատվերի կատարմանը;

4.1.5. Բանկի աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված պահանջներին;

4.1.6. Բանկում առանձնացվել են գործարքի կնքման նպատակով Բանկ ներկայացված պատվերների ընդունումը և ըստ ստացված հայտի համապատասխան գործարքն իրականացնող ստորաբաժանումների գործառույթները;

4.1.7. Բանկի աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն՝ արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որի վերջնական նպատակն է Բանկի գործարքները կնքելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը, կամ որը հակասում է «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգող ՀՀ իրավական ակտերին;

4.1.8. Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է Հաճախորդներին ներկայացնել հաշվետվություններ՝ վերջիններիս դրամական միջոցներով և/կամ ֆինանսական գործիքներով իրականացված գործարքների վերաբերյալ: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվության ծավալը սահմանվում է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերով, բայց չի կարող պակաս լինել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծավալը:

4.1.9. Բանկը չի խրախուսում աշխատակիցների հարազատների, ազգականների կամ աշխատակիցների հետ որևիցե փոխկապակցվածություն ունեցող անձանց անմիջական ենթակայությունը, փոխգործակցությունը, Բանկի հանձնաժողովներում, կոլեգիալ մարմիններում վերջիններիս ներգրավվածությունը: Բացառություն կարող է տեղի ունենալ միայն թեկնածուի բացառիկ որակավորումների և փորձի առկայության դեպքում:


5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔ/ԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԵՌՆԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Բանկի ԱԿՎ-ն պարբերաբար իրականացնում է Բանկի, Բանկի աշխատակիցների, վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված այլ անձանց, հաճախորդների միջև շահերի բախման հնարավոր կամ արդեն իսկ ի հայտ եկած դեպքերի բացահայտում/ուսումնասիրություն, դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:

5.2. Շահերի բախման հնարավոր դեպքերի մասին տեղեկատվությունը կարող է բացահայտվել Բանկի աշխատակիցների, ղեկավար¹ հանդիսացող անձանց, Անվտանգության վարչության կողմից:

5.3. Այն դեպքում, երբ աշխատակցին, իր իրավասությունների շրջանակներում, հայտնի է դարձել գործարքի կատարման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման մասին տեղեկատվություն, ապա վերջինս պարտավոր է MS Outlook էլեկտրոնային համակարգի միջոցով և/կամ բանավոր ձևով (MS Outlook էլեկտրոնային համակարգի բացակայության դեպքում) տեղեկացնել դրա մասին իր ստորաբաժանման ղեկավարին:

¹ Համաձայն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բանկի ղեկավար, փոխկապակցված և Բանկի հետ կապված անձ հանդիսանալու չափորոշիչների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	IN 54-01		
	Շահերի բախման սահմանափակման հրահանգ	Ամսաթիվ՝ 26.12.2016թ.	Խմբագրություն 2	6/5

5.4. Վերջինս, շահերի բախման մասին տեղեկատվությունն ստանալուն պես, իր հերթին հարցը MS Outlook էլեկտրոնային համակարգով ներկայացնում է Անձնակազմի կառավարման վարչության /այսուհետ՝ ԱԿՎ/ պետին /միաժամանակ CC անելով իր վերադասին /առկայության դեպքում//:

5.5. ԱԿՎ պետը, ստանալով համապատասխան գրությունը, ուսումնասիրում է այն, համապատասխան դեպքի մասով տալիս է եզրակացություն և, անհրաժեշտության դեպքում, վերջինիս հիման վրա կայացնում համապատասխան որոշում:

5.6. ԱԿՎ պետը, եզրակացությունը կազմելիս և համապատասխան որոշումը կայացնելիս, կարող է խորհրդակցել շահագրգիռ ստորաբաժանման ղեկավարի հետ:

5.7. Անհրաժեշտություն դեպքում, ԱԿՎ պետը շահերի բախման դեպքի մեջ ներգրավված աշխատակից/ների հետ կարող է կազմակերպել քննարկում:

5.8. Եզրակացության և կայացված որոշման հիման վրա աշխատակից/ների նկատմամբ Բանկի Գործադիր տնօրենի կողմից կարող է կիրառվել կարգապահական տույժ՝ համաձայն Բանկի «Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար աշխատակիցներին տույժի ենթարկելու մասին հրահանգի» /IN 62-05/:

5.9. Եզրակացությունը և դրա հիման վրա համապատասխան որոշումը /եթե այդպիսին առկա է/, տվյալ որոշումը կայացնելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է տվյալ աշխատակից/ներին /միաժամանակ պատճենը վերջին/ներիս վերադաս/ներին /առկայության դեպքում//:


5.10. Միաժամանակ, Բանկի ղեկավար հանդիսացող անձը իր հերթին պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ բացահայտելու իր ենթակայության ներքո գտնվող աշխատակիցների՝ միմյանց միջև, ինչպես նաև աշխատակցի և հաճախորդի (մատակարարի) միջև ցանկացած կապը /ազգակցական, ընկերական, միմյանց նկատմամբ պահանջի առկայություն, հարևան, նախկինում մատուցված ծառայություններ, ընդհանուր տնտեսական շահ և այլն/:

5.11. Համապատասխան կապի բացահայտման դեպքում վերջինս այդ մասին MS Outlook էլեկտրոնային համակարգով տեղեկացնում է ԱԿՎ պետին /միաժամանակ CC անելով իր վերադասին /առկայության դեպքում//:

5.12. ԱԿՎ պետը, ստանալով համապատասխան տեղեկատվությունը, ուսումնասիրում է այն և, անհրաժեշտության դեպքում, փոխկապակցվածության համակարգում փոփոխություններ կատարելու նպատակով իրականացնում համապատասխան գործողություններ՝ համաձայն Բանկի «Հաճախորդների, հաշիվների բացման և վարման մեթոդական ուղեցույցի» /MD 72-01/:

5.13. Միաժամանակ, ԱԿՎ պետի և ղեկավար հանդիսացող անձի /անհրաժեշտության դեպքում՝ վերջինիս վերադասի /առկայության դեպքում// կողմից կարող է կայացվել որոշում, որպեսզի

- Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված հարաբերություններում շահերի բախում ունեցող աշխատակիցը զերծ մնա գործարքում/գործառնությունում հանդես գալու իրավասությունից, մասնավորապես՝ չիրականացնի համապատասխան հաճախորդի սպասարկումը (հաճախորդի սպասարկումը պետք է փոխանցի այլ աշխատակցի),
- կարծիք չներկայացնի համապատասխան վարկային գործի, ներդրումի և նախագծի/ծրագրի վերաբերյալ,
- չմասնակցի քվեարկությանը՝ համապատասխան հաճախորդի գործով,

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	IN 54-01		
	Շահերի բախման սահմանափակման հրահանգ	Ամսաթիվ՝ 26.12.2016թ.	Խմբագրություն 2	6/6

- ներգրավված չլինի որպես հանձնաժողովի անդամ՝ շահագրգռվածություն ունեցող անձի հարցի վերաբերյալ քննարկման ժամանակ, բացառությամբ եթե աշխատակցի գերծ մնալը չի խոչընդոտի Բանկի բնականոն գործունեությանը:

5.14. Այն դեպքում, երբ աշխատակիցը կիսախտի վերոնշյալ որոշումը, ապա աշխատակցի ղեկավարը այդ մասին տեղեկացնում է ԱԿՎ պետին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

5.15. ԱԿՎ պետը Բանկի, Բանկի աշխատակիցների, վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված այլ անձանց, հաճախորդների միջև շահերի բախման հնարավոր կամ արդեն իսկ ի հայտ եկած դեպքերի, դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ կազմում է հաշվետվություն և եռամսյակային պարբերականությամբ ներկայացնում Բանկի Գործադիր տնօրենին:

6. ՀՐԱՀԱՆԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

6.1. Բանկի համապատասխան իրավասություններով աշխատակիցները Հրահանգի դրույթների հետ ծանոթացնում են Հաճախորդին, իսկ վերջիններիս պահանջով այն տրամադրվում է ամբողջությամբ՝ տպագիր կամ էլեկտրոնային տեսքով:

6.2. 6.2. Հրահանգը տեղադրվում է Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am: